



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

14 հոկտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ

Մասնակցում էին՝

Ավագանու նստավայր

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Գրիգոր Կարապետյանը, Արշակ Սրայանը, Շուշանիկ Հակոբյանը, Պավլիկ Պապինյանը և Ալվարդ Ավետիքյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սերյոժա Սարգսյանը, Արայիկ Քոչարյանը և Էմմա Գասպարյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սևակ Խաչատրյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 10 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.00-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և ներկայացրեց թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 24.09.2025թ.-ի թիվ 28 արձանագրությունը: Համաձայն ընտրական հանձնաժողովի արձանագրության Փամբակ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ Արմենուհի Ապրեսի Ոսկանյանի մանդատը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Ալվարդ Ավետիքի Ավետիքյանին: Համայնքի ղեկավարը շնորհավորեց Ալվարդ Ավետիքյանին, մաղթեց ակտիվ և արդյունավետ թիմային աշխատանք:
Ս. Կոստանդյանը առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի 3-րդ հարցում՝ «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծում կատարել լրացում,

վարձակալության իրավունքով տրամադրվող 4 լոտ հողամասին ավելացնել ևս 3 լոտ: Ինչպես նաև օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 11-րդ հարց և որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ.

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

Ս. Կոստանդյանը առաջարկեց քվեարկել օրակարգում փոփոխություն կատարելու համար: Քվեարկությամբ, կողմ՝ 10 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծն ընդգրկվեց օրակարգում, իսկ օրակարգի 3-րդ հարցում կադարվեց լրացում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով: Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 103-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը. Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025 թվականի III եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Սերմնաբուծական կայանի կառուցման նպատակով սեփականության իրավունքով «Էյ Թի Փի» ԲՀ-ին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

7. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

9. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

ԸՆԹԱՅԲԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025 թվականի III եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի բյուջեից 2025 թվականի III եռամսյակում Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած թվով 10 ընտանիքի հատկացվել է ընդհանուր 457000 ՀՀ դրամի աջակցություն, որից՝

1. 2 ընտանիքի հատկացվել է 142000 ՀՀ դրամի աջակցություն շինանյութի տեսքով:

2. 3 ընտանիքի հատկացվել է 60000 ՀՀ դրամի չափով սննդի քարտ:

3. 2 ընտանիքի հատկացվել է 60000 ՀՀ դրամի չափով դեղորայքի քարտ:

4. Փոխհատուցվել է 2 բնակչի մահված ծախսերը 120000 ՀՀ դրամի չափով և 1 բնակչի բուժման ծախսը՝ 75000 ՀՀ դրամի չափով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 104-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 16 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և 7 լոտ հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 105-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Սերմնաբուծական կայանի կառուցման նպատակով սեփականության իրավունքով «Էյ Թի Փի» ԲՀ-ին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Էյ Թի Փի» ԲՀ-ի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, նրան սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0354-0093 կադաստրային ծածկագրով 0,174 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարքը՝ «Սերմերի բանկ» անտառային ծառերի սերմատեսակների երկարաժամկետ (100 տարի ժամկետով) պահպանման նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 106-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն. հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, տալ համաձայնություն սեփականության իրավունքով նրան պատկանող 06-034-0120-0031 կադաստրային ծածկագրով 1,021743 հա հողամասին կից գտնվող 06-034-0120-0028 կադաստրային ծածկագրով 0,493938 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 700 900 (յոթ հարյուր հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 107-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Նախատեսված 695.941.400 դրամի դիմաց փաստացի կազմել են 572.060.200 դրամ, կամ կատարողականը կազմել է 82.2 %: Նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 17.444.000 հազ. դրամով:

Վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 618.850.800 դրամի դիմաց փաստացի կատարվել է 550.888.100 դրամ՝ ապահովելով 89.0 % կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել է կատարվել 700784.700 հազ. դրամով:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 199,605.800 դրամի դիմաց փաստացի կատարվել է 21.172.100 դրամ՝ ապահովելով 10.6 % կատարողական:

2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 169.061.000 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 101.098.100 դրամ, կատարողականը կազմելով 59.8 %: 2024թ-ի համեմատությամբ եկամուտները ավել է գանձվել 6.843.400 դրամով:

Ներկայացվում է սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/.

Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 200.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 67.300 հազ. դրամ, կատարողականը կազմելով 33.7 %: Հողի հարկի ապառքի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 1500.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 2.133.800 դրամ, կատարողականը կազմելով 142.3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 460.200 դրամ: Անշարժ գույքի հարկի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 40.951.400 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 15.284.600 դրամ, կատարողականը կազմելով 37,3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.812.000 դրամ: Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 67.001.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 30.313.800 դրամ, կատարողականը կազմելով 45.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 2.108.100 դրամ:

Տեղական տուրքերի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 7.039.600 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 7.854.700 դրամ, կատարողականը կազմել է 111.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.367.500 դրամ: Այլ եկամուտների մասով – նախատեսված 52.368.700 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 45.443.900 դրամ, կատարողականը կազմելով 86.8%:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2025 թվականի երրորդ եռամսյակի համար նախատեսված 449.790.100 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 449.790.000 դրամ, կատարողականը կազմել է 100 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 63.941.400 հազ. դրամով:

2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի հատկացումներ չեն եղել:

ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 911.252.200 դրամի դիմաց փաստացի կատարվել են 580.234.800 դրամով, կամ կատարողականը կազմել է 63.7%: Նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ ծախսերը ավել է կատարվել 172.102.100 հազ. դրամով: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 108-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է ծախսերի գծով իրականացնել հետևյալ փոփոխությունները.

04.05.01՝ «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի, 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածում ավելացնել 2.446.000 ՀՀ դրամ, Փամբակ գյուղի 1-ին փողոցի ասֆալտապատման ծրագրի իրականացման համար:

01.06.01՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» նախահաշվի, 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածում ավելացնել 3.411.000 ՀՀ դրամ՝ Վահագնի գյուղում կենտրոնական հրապարակի նորոգման համար: Նույն նախահաշվի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածում ավելացնել 500.000 ՀՀ դրամ:

08.02.04՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» նախահաշվի, 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածում ավելացնել 500.000 ՀՀ դրամ՝ «Բերքի տոն» միջոցառման կազմակերպման աշխատանքներին աջակցելու համար:

Վերը նշված ծախսերի համար 09.01.01՝ «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի, 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածից պակասեցնել 3.678.300 ՀՀ դրամ, ինչպես նաև նույն նախահաշվի 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում / հոդվածից պակասեցնել 3.178.700 ՀՀ դրամ

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 109-Ն/:

7. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա

Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2025 թվականի հուլիսից մինչև սեպտեմբեր ամիսը համայնքի բյուջեի միջոցներով և այլ ծրագրերով ձեռք է բերվել 32.364.000 ՀՀ դրամի հիմնական միջոց՝ ցանկը կցվում է:

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Գինը /դրամ/	Գումարը /դրամ/
			Փաստացի	հաշվապահական		
			(քանակը)	տվյալներով (քանակը)		
1	Անվտանգության տեսախցիկներ	2025թ.	2	2	85000	170000
2	Բազմոց	2025թ.	1	1	170000	170000
3	Անշարժ աթոռ ZV-B202	2025թ.	11	11	20000	220000

4	Ղեկավարի աթոռ BERGAMO	2025թ.	1	1	60000	60000
5	Էքսկավատոր-բեռնիչ	2025թ.	1	1	31284000	31284000
6	Հոսանքի գեներատոր բենզինային շարժիչով	2025թ.	1	1	350000	350000
7	Ձեռքի խոտհնձիչ բենզինային	2025թ.	2	2	25000	50000
8	Ձեռքի խոտհնձիչ բենզինային	2025թ.	1	1	25000	25000
9	Ձեռքի շղթայավոր սղոց մարտկոցով ZVER	2025թ.	1	1	25000	25000
10	պլիտա կոնվեկտոր CH2000 16-7	2025թ.	1	1	10000	10000
	ԸՆԴԱՄԵՆԸ		22	22	32054000	32364000

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին
ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 110-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց
օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային
կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Ձեկուցողը առաջարկեց ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, իր կանոնադրությամբ սահմանված
գործառույթներն իրականացնելու նպատակով, անժամկետ, անհատույց օգտագործման
իրավունքով ամրացնել Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող, մասնակցային
բյուջետավորման ծրագրի շրջանակներում ձեռք բերված JOB 3CXE14MONM մակնիշի 58 48 LL
պետական համարանիշի Էքսկավատոր-բեռնիչը: Վերը նշված գույքի պահպանման և
շահագործման ծախսերն իրականացնել «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի միջոցներով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը
պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ
պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 111-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Աղունիկ Ավետիքյանի գրությունը, այն հանգամանքը, որ մանկապարտեզի սաների տեղերի քանակը 30-ն է, սակայն 2026թ-ի ընդունելության համար հերթագրվել են 22 երեխա, առկա են ազատ տեղեր և մինչև 3 տարեկան երեխաների ընդունելությունը կազմակերպելու նպատակով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով, ինչպես նաև հաստատել «Դեբետի Արևիկ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 112-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի նոյեմբերի 19-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 113-Ա/:

Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի նոյեմբերի 19-ը: Նիստի սկիզբ սահմանել ժամը 14.00-ն:


Համայնքի ղեկավարը հայտարարեց, որ օրակարգի հարցերը սպառվել են և նիստը համարվում է փակված:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ



ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 103-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2025թ-ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ի ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի
ավագանին՝ **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի
ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը:
ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025 թվականի III եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:
3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
4. Սերմնաբուծական կայանի կառուցման նպատակով սեփականության իրավունքով «Էյ Թի Փի» ԲՀ-ին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ին օտարելու մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2025թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
7. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

9. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:
11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Դեբետի Արևիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին:

Կողմ -10


Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 104-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՅԼ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԴԱՐՁԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ III ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24 հոկտեմբերի 2024 թվականի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանու «Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի թիվ 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» 13 փետրվարի 2025 թվականի N 004-Ա և «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» 13 փետրվարի 2025 թվականի N 005-Ա որոշումներով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Ընդունել ի գիտություն Փամբակ համայնքի բյուջեից 2025 թվականի III եռամսյակում Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին

հատկացված սոցիալական աջակցության վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն
հավելվածի:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ


Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

2025թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեից անապահով ընտանիքներին հատկացված դրամական օգնության վերաբերյալ

ՀՀ	Ամիս/ամսաթիվ	Որոշման համար	Վարչական շրջան	ԱԱՀ կամ Կազմակերպության անվանում, ՀՎՀՀ	Սոցոգնության տեսակը/ չափը
1	04.07.2025թ.	0720-Ա	Լեռնապատ	Սերգո Սամվելի Եղիազարյան	42.000 դրամ/շինանյութի տեսքով
2	04.07.2025թ.	0720-Ա	Վահագնաձոր	Սուսան Մեհրդատի Գրիգորյան	100.000 դրամ/շինանյութի տեսքով
3	07.07.2025թ.	0723-Ա	Բազում	«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ, Հ/Հ՝ 900018006966	Անիկ Վահրամի Ծառուրյանի թաղման ծախսերի փոխհատուցում/ 60000 դրամ
4	07.07.2025թ.	0767-Ա	Փամբակ	Արմիկ Ալբերտի Գալոյան	սննդի ձեռքբերման 2 քարտ՝ 20.000 դրամ
5	07.07.2025թ.	0768-Ա	Փամբակ	Արևիկ Ֆելիքսի Բաբայան	սննդի ձեռքբերման 2 քարտ՝ 20.000 դրամ
6	07.07.2025թ.	0769-Ա	Լեռնապատ	Գոհար Ռուսլանի Մուկուչյան	դեղորայքի ձեռքբերման 3 քարտ՝ 30.000 դրամ
7	28.07.2025թ.	0795-Ա	Վահագնի	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Անահիտ Հարությունյանի բժշկական ծախսերի փոխհատուցում՝ 75.000 դրամ
8	25.08.2025թ.	0902-Ա	Ձորագյուղ	Մանվել Ալեքսու Հովհաննիսյան	սննդի ձեռքբերման 2 քարտ՝ 20.000 դրամ
9	02.09.2025թ.	0931-Ա	Մարգահովիտ	«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ, Հ/Հ՝ 900018006966	Դավիթ Արժանիկի Պետրոսյանի թաղման ծախսերի փոխհատուցում/ 60000 դրամ
10	11.09.2025թ.	0951-Ա	Վ. և Լ. Լաստիկի	Լ. Լաստիկի	դեղորայքի ձեռքբերման 5 քարտ՝ 30.000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 105-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ,
ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՅՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-3003-0002 ծածկագրով 0,2 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 160 000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0576 ծածկագրով 0,43215 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2 500 000 /երկու մլն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0247-0014 ծածկագրով 0,1052 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 690000 /վեց հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0245-0015 ծածկագրով 0,0958 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության

հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 630000 /վեց հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0246-0004 ծածկագրով 0,0874 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 580000 /հինգ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0240-0013 ծածկագրով 0,09317 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 620000 /վեց հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0462 ծածկագրով 0,07929 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 530000 /հինգ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0463 ծածկագրով 0,07053 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 470000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0266-0041 ծածկագրով 1 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 5080000 /հինգ միլիոն ութսուն հազար/ ՀՀ դրամ:

10) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրի 06-036-0129-0002 ծածկագրով 0,077677 հա բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2250000 /երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

11) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրի 06-036-0129-0003 ծածկագրով 0,155779 հա բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 4280000 /չորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

12) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0097-0028 ծածկագրով 0,03539 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 850000 /ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

13) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0004-0011 ծածկագրով 0,11494 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2 800 000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

14) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Ձորագյուղ բնակավայրի 06-066-0120-0122 ծածկագրով 0,35187 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

15) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Ձորագյուղ բնակավայրի 06-066-0120-0134 ծածկագրով 0,1666 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 700 000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

16) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0066-0030 ծածկագրով 0,09368 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լուսի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0250-0029 ծածկագրով 0,10285 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 06-041-0204-0043 ծածկագրով 0,06384 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 06-041-0201-0099 ծածկագրով 0,14068 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0109-0012 ծածկագրով 0,28482 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0238-0021 ծածկագրով 0,06885 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի արոտավայր գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0102-0106 ծածկագրով 3,806161 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 12000 /տաս երկու հազար/ ՀՀ դրամ:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0101-0039 ծածկագրով 0,15588 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լուտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ


ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵ.



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 106-Ա

ՍԵՐՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԷՅ ԹԻ ՓԻ» ԲՀ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, «Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով «Էյ Թի Փի» ԲՀ-ի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. «Էյ Թի Փի» ԲՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0354-0093 կադաստրային ծածկագրով 0,174 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասը՝ «Սերմերի բանկ» անտառային ծառատեսակների սերմատեսակների երկարաժամկեղ (100 տարի ժամկետով) պահպանման նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -10
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 107-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԴԵԲԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-034-0120-0031 կադաստրային ծածկագրով 1,021743 հա հողամասին կից գտնվող 06-034-0120-0028 կադաստրային ծածկագրով 0,493938 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով «Դեբեդ գրուպ» ՍՊԸ-ին օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 700 900 (յոթ հարյուր հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 19 օգոստոսի 2025 թվականի N 085-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:


Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵ-



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 108-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2025Թ-Ի III
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային
համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին
մասի 1-ին կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի 9
ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտները նախատեսված 695941.4 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել են 572060.2 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 82.2 %: Նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 17444.0 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 97.0%:

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 618850.8 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 550888.1 հազ դրամ՝ ապահովելով 89.0 % կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել է կատարվել 70784.7 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 87.2%: Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 199605.8 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 21172.1 հազ դրամ՝ ապահովելով 10.6 % կատարողական:: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները պակաս է գանձվել 53340.8 հազ. դրամով;

2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 169061.0 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 101098.1 հազ. դրամ, կատարողականը կազմելով 59.8 %: 2024թ-ի համեմատությամբ եկամուտները ավել է գանձվել 6843.4 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 93.2 % կատարողական:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 200.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 67.3 հազ. դրամ, կատարողականը կազմելով 33.7 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 435.8 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 13.4 %-ով:

Հողի հարկի ապառքի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 1500.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 2133.8 հազ. դրամ, կատարողականը կազմելով 142.3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 460.2 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 127.5 %-ով:

Անշարժ գույքի հարկի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 40951.4

հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 15284.6 հազ. դրամ, կատարողականը կազմելով 37,3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2812.0 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 81.6 %-ով:

Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 67001.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 30313.8 հազ. դրամ, կատարողականը կազմելով 45.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 2108.1 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 107.0 %-ով:

Տեղական տուրքերի մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 7039.6 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 7854.7 հազ. դրամ, կատարողականը կազմել է 111.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2367.5 հազ. դրամ, նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 69.9 %-ով:

Այլ եկամուտների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 52368.7 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 45443.9 հազ. դրամ, կատարողականը կազմելով 86.8%:

Որից՝

1) Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 8602.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 5401.4 հազ. դրամ, կատարողականը կազմել է 62.8%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 662.1 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 112.3%-ով:

2) Այլ գույքի վարձակալության մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 810.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 792.2 հազ. դրամ, կատարողականը կազմել է 97.8 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 312.4 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 139.4%-ով:

3) Տեղական վճարների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 11800.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 14191.1 հազ. դրամ, կատարողականը կազմել է 120.3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2891.6 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 79.6 %-ով:

4) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 3200.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 4671.8 հազ. դրամ, կատարողականը կազմել է 146.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1517.9 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 67.5 %-ով:

5) Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված 9933.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 9933.0 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 100 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 9933.0 հազ. դրամ:

6) Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով – երրորդ եռամսյակի համար նախատեսված

18023.7 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 10454.5 հազ. դրամ, կատարողականը կազմել է 58.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 3379.6 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 67.7 %-ով:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

